ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՔԵԼՅԱՆ ԴԱՎԻԹ ԳԱԳԻԿԻ

# ՖԱԼԻԲԻԼԻԶՄԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում։

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ս. Մանասյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պ. Ս. Ավետիսյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ղ. Բալայան

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. մայիսի 13-ին՝ ժամը 16:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում։

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2026թ. ապրիլի 9-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Լ. Ղարագուլյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունն ու հրատապությունը:** Հարյուրամյակներ շարունակ գրեթե բոլոր իմացաբանները համարել են, որ մարդկային իմացությունը պետք է հիմնվի անհերքելի, անսխալական և բացարձակ իմացական հիմքերի վրա: Այստեսակ ճանաչողական կատարելատիպը եղել է բազմաթիվ փիլիսոփաների տեսիլը՝ գտնել այնպիսի հաստատուն իմացական հանգրվաններ, որոնք իմացաբանական-էպիստեմոլոգիական հիմք կլինեն անսխալական, անկասկածելի իմացության և հավաստի ու օբյեկտիվ ճանաչողությանը հասնելու համար: Ժամանակակից իմացաբանության և գիտության փիլիսոփայության դիտանկյունից իմացաբանական-էպիստեմոլոգիական դասական խնդրակարգի և հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդկային ճանաչողությունը և գիտելիքը չեն կարող անմասն լինել սխալի հնարավորությունից և սուբյեկտիվի դրսևորումներից: Ըստ այդմ, գիտելիքը ըմբռնվում է որպես հարափոխ բնույթի իրողություն, որը լավագույն դեպքում կարող է հիմնավորվել և ճշմարտության արժեքի տեսանկյունից որոշարկվել միայն մոտավոր որոշակիությամբ:

Իմացության նկատմամբ առավելապաշտական հավակնություններ ունեցող դասական իմացաբանական հայեցակարգերը, ի դեմս ֆունդամենտալիզմի, դոգմատիզմի և ինֆալիբիլիզմի, այլևս կենսունակ չեն, քանի որ դրանք հաշվի չեն առնում գիտելիքի հիմնավորման նկատմամբ ծայրահեղ ու անիրագործելի նախապայմաններ առաջադրելու խնդրահարույց կողմերը, մարդկային ճանաչողական կարողությունների սահմանափակությունները, գիտելիքներում սխալների առկայության հնարավորությունը, ինչպես նաև գիտելիքի դինամիկ, զարգացող ու հարափոխ բնույթը: Ուստի պետք է ընդունել գործնականում անսխալական և բացարձակ իմացական հիմքերի ապահովման անհնարինությունը, ինչպես նաև գիտելիքի անսխալականությունն անվերապահ ընդունող հայեցակարգերի խնդիրներն ու սահմանափակությունները: Ասվածը ենթադրում է նաև գիտելիքի անսխալականության պայմանից հրաժարում, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ճանաչողության հարցում ծայրահեղ կասկածապաշտության և հարաբերապաշտության վտանգավոր դրսևորումներին:

Այս իրողության պայմաններում արդիական են դառնում հարցադրումներն այն մասին, թե ինչպես է հնարավոր ապահովել հուսալի և հիմնավոր, բայց միևնույն ժամանակ սխալականության հնարավորությունը չբացառող, հարափոխ և համատեքստից ու պրակտիկ գործադրման պայմաններից կախված գիտելիքի ստացումը, և ինչ չափանիշներով պետք է գնահատել գիտելիքի հիմնավորվածությունը: Այդ համատեքստում սխալականությունը պետք է ըմբռնել որպես ճանաչողության հիմնարար սահմանափակություն և գիտելիքի բնութագրի մաս՝ չշփոթելով այն ճշմարիտի հակոտնյաների՝ կեղծիքի, մոլորության և սխալի հետ: Սխալականությունը

բնորոշում է մարդու ճանաչողական կարողությունների անկատարությունը և ճանաչողությունում սխալի հավանական ռիսկի անօտարելիությունը, որը, որպես ճանաչողության մեջ ներկառուցված նախապայման, թեև հնարավոր չէ լիարժեքորեն հաղթահարել, սակայն այն ընդունելու շնորհիվ հնարավոր է ապահովել գիտելիքի շարունակաբար բարելավվող և զարգացող բնույթը:

Ճանաչողության մեջ մեզ հետաքրքրում են ճշմարտությունը և հիմնավոր գիտելիքը: Միևնույն ժամանակ սխալները դառնում են ճանաչողության համար կարևոր և իմացաբանորեն արժեքավոր այնքանով, որքանով դրանց հայտնաբերումը, համակարգային վերացումը և սխալվելու փորձառությունից սովորելը դառնում է գիտելիքի բարելավման և ճշմարտությանը մոտենալու միջոց և նախապայման: Ուստի ճանաչողությունում ոչ միտումնավոր սխալները՝ մոլորությունները, ինչպես նաև որոշակի միտում և նենգամտություն ենթադրող սխալներն ու կեղծիքները դառնում են սխալականության այնպիսի դրսևորումներ, որոնց բացահայտումն ու հաղթահարումը դառնում են հավանական սխալի գիտակցման և գիտելիքի կատարելագործման գործնական մեխանիզմներ՝ նպաստելով գիտական առաջընթացին և ճանաչողությունում օբյեկտիվ ճշմարտությանը ձգտելու ջանքերին:

Ժամանակակից գիտության փիլիսոփայության համար առանձնակի հրատապություն են ստանում գիտելիքի հիմնավորման, գիտական գիտելիքի օբյեկտիվության և ճշմարտության, գիտական առաջընթացի և այլ հիմնախնդիրները: Այս համատեքստում ֆալիբիլիզմը ստանում է ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն, ինչը հնարավորություն է տալիս մեկնաբանել գիտելիքի՝ սխալի անօտարելի ռիսկին ենթակա, վերանայելի և հարափոխ բնույթը որպես գիտության զարգացման իմացաբանական նախապայման՝ առանց դրա ճանաչողական հնարավորությունները նվազեցնելու:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև տեղեկատվության աննախադեպ աճով և ինչպես գիտական, այնպես էլ առօրյա ճանաչողությունում արհեստական բանականության ազդեցության մեծացմամբ: Տեղեկատվական հոսքերի էքսպոնենցիալ աճը, տվյալների հավաքագրման, մշակման և համակարգման բազմազան մեխանիզմները ոչ միայն ընդլայնում են գիտելիքի ստեղծման հնարավորությունները, այլև ավելացնում են ճանաչողությունում և գիտելիքում սխալների, մոլորությունների, կողմնակալությունների ու մեթոդաբանական անորոշությունների ռիսկերը: Արդյունքում գիտելիքի հավանական սխալականությունը դառնում է ոչ միայն մարդկային ճանաչողության, այլ նաև տեխնոլոգիական միջավայրերի ու ժամանակակից ցանցային հասարակության կառուցվածքների անբաժան բաղադրիչ:

Ֆալիբիլիզմի կողմից առաջադրված գաղափարների արդիականությունը պայմանավորված է նաև հանրային, քաղաքական և գիտական խոսույթներում ծավալվող այնպիսի երևույթներով, ինչպիսիք են՝ անսխալականության անհիմն պահանջն ու դրա դրսևորումները, փաստերի ընտրողական ընդունումը կամ մերժումը, ինչպես նաև

ծայրահեղ կասկածապաշտության և հարաբերապաշտության աճի միտումները։ Հետճշմարտության ժամանակաշրջանում գիտելիքի հիմնավորման պահանջը հաճախ զիջում է անձնական համոզմունքներին, քաղաքական շահերին և տեղեկատվական մանիպուլյացիաներին։ Արդյունքում գիտական դրույթները երբեմն ներկայացվում են որպես հարաբերական կարծիքներ, իսկ հաստատված փաստերը՝ որպես վիճարկելի մոտարկումներ՝ անկախ դրանց հիմնավորվածության աստիճանից։ Այս համատեքստում ֆալիբիլիզմը հանդես է գալիս որպես հակազդեցություն թե՛ դոգմատիկ անսխալականության, թե՛ ապակառուցողական կասկածապաշտության նկատմամբ՝ առաջարկելով միջանկյալ, ռացիոնալ և առողջ քննադատական դիտակետ, որտեղ գիտելիքը միաժամանակ ներկայանում է որպես հավաստի, բայց երբեք ոչ վերջնական, որպես սխալական, բայց բարեփոխելի իրողություն։

**Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը։** Ֆալիբիլիզմի որպես գիտելիքի հավանական սխալականության հայեցակարգի վերաբերյալ գիտատեսական քննարկումները համեմատաբար նորահայտ իրողություններ են գիտափիլիսոփայական խոսույթում։ Խնդրի տեսական հիմքերը առավել համակարգված կերպով ձևակերպվել են Չ. Պիրսի իմացաբանության շրջանակում, որտեղ ֆալիբիլիզմը բարձրացվել է գիտության զարգացման հայեցակարգի մակարդակ՝ ներկայացվելով որպես մարդկային բնույթի և ճանաչողության բնական սահմանափակություն։ Խնդրի և հայեցակարգի հետագա քննարկմանը և մշակմանը անդրադարձել է Կ. Փոփերն իր իմացաբանական-էպիստեմոլոգիական համակարգում, որտեղ հավանական սխալականությունը դիտվում է որպես գիտական ռացիոնալության և ճանաչողության հիմնարար մեխանիզմներից մեկը։ Այնուամենայնիվ, անհրաժեշտ է արձանագրել, որ մասնագիտական գրականությունում առ այսօր բավարար ուշադրություն չի դարձվել փիլիսոփայության և գիտության պատմության ընթացքում սխալականության երևույթներին, ինչպես նաև սխալականության վերաբերյալ համակարգված ուսումնասիրություններին։ Գրեթե բացակայում են հետազոտություններ, որոնցում կհետապնդվեր գիտության և գիտելիքի զարգացման արդի խնդրակարգի համատեքստում ֆալիբիլիզմի հայեցակարգային նշանակության և գործառույթի վերաբերյալ ամբողջական և համակողմանի պատկեր ստանալու նպատակը։ Թեմայի և քննարկված հիմնախնդիրների վերաբերյալ առկա ուսումնասիրությունները կարելի է ներկայացնել հետևյալ պայմանական խմբավորմամբ՝

- Որոշ ուսումնասիրություններ վերաբերում են ֆալիբիլիզմի հայեցակարգային զարգացման հիմքում մեղմ կամ չափավոր սկեպտիցիզմի արժևորմանը (Վոգթ Կ., Ալլեն Ջ., Բրիթեյն Չ., Օսորիո Փ., Կուբոկ Դ., Հեք Ս., Քուկ. Է, Քուայն Ու. և այլք)։
- Մեկ այլ խումբ ուսումնասիրողներ ֆալիբիլիզմի հայեցակարգային դիրքորոշման իմացաբանական-մեթոդաբանական նախընտրելիությունը քննարկում են գիտության զարգացման հայեցակարգերի համատեքստում (Գեթիեր Է., Ռիդ Բ., Քրաֆթ Թ., Լեյտե Ա., Էլզեյն Ն., Լևիս Դ., Հեթերինգթոն Ս., Բրաուն Ջ. և այլք)։

• Հիմնախնդիրն առանցքային նշանակություն ունի ճշմարտության, օբյեկտիվության, գիտության նպատակի, գիտելիքի հիմնավորման, գիտական առաջընթացի և գիտության փոփոխության հիմնախնդիրներն ուսումնասիրող հեղինակների աշխատանքներում (Պիրս Չ., Դյուի Ջ., Կառնապ Ռ., Փաթնամ Հ., Ռորտի Ռ., Տարսկի Ա., Փոփեր Կ., Կուն Թ., Լակատոս Ի., Լաուդան Լ., Հենոն Մ., Բարսեղյան Հ. և այլք)։

• Մեզանում թեև բացակայում են հիմնախնդիրը խորությամբ ուսումնասիրած հետազոտությունները, այնուամենայնիվ, հիմնախնդրի քննության համար արժեքավոր են եղել որոշ հայ հեղինակների պատմափիլիսոփայական, իմացաբանական-էպիստեմոլոգիական և այլ ուսումնասիրությունները (Մանասյան Ա., Գրիգորյան Ք., Բարսեղյան Հ., Ղազարյան Ա., Ավետիսյան Ս., Զաքարյան Ս., Միրզոյան Վ., Բրուտյան Գ., Աբրահամյան Լ., Ավագյան Վ., Հակոբյան Գ., Շաքարյան Հ. և այլք)։

• Մեկ այլ խումբ հետազոտողների շրջանում ձևավորվում է միտում քննելու և ուսումնասիրելու սխալականության երևույթը և ֆալիբիլիզմի հայեցակարգային նշանակությունը արտահիմացաբանական խնդրակարգում (Վեթերստեն Ջ., Ուիլյամ Հ., Սիգել Հ., Ֆից-Քլարիջ Ս. և այլք)։

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հետազոտության նպատակն է քննության առնել և վերահիմաստավորել ֆալիբիլիզմի, որպես գիտության զարգացման հայեցակարգի, դերը գիտության փիլիսոփայության արդի խնդրակարգի շրջանակում՝ բացահայտելով այլ հիմնարար հայեցակարգերի կողքին ֆալիբիլիզմի իմացաբանական-էպիստեմոլոգիական և մեթոդաբանական նշանակությունը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում։

Առաջադրված նպատակին հասնելու և վերջինից բխող ենթահարցերի ուսումնասիրման նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

• վեր հանել և վերլուծել ֆալիբիլիզմի ձևավորման տեսական նախադրյալներն անտիկ, նոր շրջանի և ժամանակակից փիլիսոփայական ավանդույթներում,

• բացահայտել և սահմանել ֆալիբիլիզմի հայեցակարգային դերն ու նշանակությունը գիտության զարգացման հայեցակարգերի և, մասնավորապես մրցակցող հայեցակարգերի համատեքստում՝ վերլուծելով գիտելիքի հավանական սխալականության սկզբունքների իմացաբանական ու մեթոդաբանական գործառույթները և հիմնավորելով գիտելիքի անսխալականության պայմանի բավարարման անհնարինությունն ու դրա տեսական պահանջի անհիմնավորվածությունը,

• ֆալիբիլիստական հայեցակարգի համատեքստում վերարժևորել մեղմ սկեպտիցիզմը և չափավոր կասկածը՝ որպես գիտելիքի ու գիտության զարգացման ներքին մեխանիզմ և քննադատական ռացիոնալության մեթոդաբանական տարր,

• ուսումնասիրել ֆալիբիլիզմի հայեցակարգային զարգացման բնույթն ու առանձնահատկությունները Պիրսի, Փոփերի և այլոց տեսական համակարգերում,

• բացահայտել ճշմարտության ներգիտական և արտագիտական չափորոշիչների փոխակերպումները ֆալիբիլիզմի հայեցակարգային մոտեցման համատեքստում,

• ներկայացնել ֆալիբիլիզմը որպես գիտական գիտելիքի օբյեկտիվության և ճշմարտությանը մոտենալու նպատակային գործընթացի ապահովման մեխանիզմ, որն արժևորում է գիտելիքի միջսուբյեկտայնությունը և օբյեկտիվ ճշմարտության որպես ուղենիշի նկատմամբ գիտելիքի շարունակական բարելավման անընդհատությունը,

• ուսումնասիրել հավանական սխալականության հետ համատեղելի հիմնավոր գիտելիքի հնարավորության հիմնահարցը՝ ցույց տալով, որ ֆալիբիլիզմը հաղթահարում է գիտելիքի անսխալական հիմնավորման վերաբերյալ ծայրահեղ մոտեցումներն ու այն հետապնդող հայեցակարգերի սահմանափակությունները,

• բացահայտել ֆալիբիլիզմի նորմատիվ-կարգավորող դերը գիտության առաջընթացի համատեքստում՝ որպես գիտելիքի շարունակական վերանայման ներգիտական պահանջ, սկզբունք և ինքնուղղման մեխանիզմ,

• վերլուծել գիտական առաջընթացի և գիտության զարգացման վերաբերյալ առկա մոդելներում հավանական սխալականության և դրա դրսևորումների իմացաբանական ու մեթոդաբանական դերը, ինչպես նաև գիտելիքի անսխալականության պահանջի հաղթահարման մեխանիզմները,

• հիմնավորել այն թեզը, որ գիտությունը զարգանում է գործնականում իմացական բացարձակ և անսխալական հիմքերից հրաժարման, սխալվելու անօտարելի ռիսկի ընդունման, սխալների հաղթահարման, ինքնաքննության և ինքնաքննադատության, մեթոդաբանական բարելավման և տեսական վերանայման շնորհիվ,

• վերլուծել ֆալիբիլիզմը արտահիմացաբանական խնդրակարգում՝ արժևորելով ֆալիբիլիզմի տեսական-պրակտիկ և մեթոդաբանական նշանակությունը սոցիալ-քաղաքական, կրթական, տեխնոլոգիական և այլ ոլորտներում:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:** Ատենախոսության մեթոդաբանական հիմքերն են վերլուծության, համադրության, համեմատության, պատմականության, կառուցվածքային-համակարգային վերլուծության մեթոդները, ինչպես նաև քննադատական-ռացիոնալ և միջգիտակարգային մոտեցումները: Վերլուծության մեթոդի կիրառմամբ հնարավոր է դարձել բացահայտել և տարանջատել ֆալիբիլիզմի իմացաբանական, էպիստեմոլոգիական և մեթոդաբանական շերտերը, ինչպես նաև պարզել գիտելիքի հավանական սխալականության գաղափարի առանձնահատկությունները և տարբերությունները այլ հայեցակարգերի նկատմամբ: Համադրության, համեմատության և պատմականության մեթոդներն օգտագործվել են տարբեր փիլիսոփայական ավանդույթներում գիտափիլիսոփայական համակարգերի և հայեցակարգերի համեմատական վերլուծության նպատակով: Համանմանության մեթոդը կիրառվել է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է եղել պարզեցնել և դյուրըմբռնելի դարձնել հարաբերականորեն նոր հասկացությունները, բարդ հասկացությային և

հայեցակարգային կառուցվածքները։ Կառուցվածքային-համակարգային մոտեցումը հնարավորություն է տվել ֆալիբիլիզմը դիտարկել համոզմունքների և գիտելիքի կառուցման մեխանիզմներում, ինչպես նաև գիտության ինքնակազմակերպման և ինքնուղղման գործընթացներում։ Միջգիտակարգային մոտեցման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել համադրել փիլիսոփայության, իմացաբանության, էպիստեմոլոգիայի, մեթոդաբանության, տրամաբանության, գիտության պատմության և արտահիմացաբանական այլ ոլորտների արդի ուսումնասիրությունները՝ ձևավորելով միասնական դիտանկյուն հավանական սխալականության և ֆալիբիլիզմի հայեցակարգային նշանակությունը համակողմանիորեն ուսումնասիրելու համար։

**Հետազոտության գիտական նորույթը։** Ֆալիբիլիզմի՝ որպես գիտելիքի հավանական սխալականության վերաբերյալ հայեցակարգի ուսումնասիրումն ու դրա ներգիտական և արտագիտական նշանակության բացահայտումը, ինչպես նաև ճանաչողության տեսության խնդրակարգում սխալի և սխալականության դերի վերլուծությունը հնարավորություն են տվել ձևակերպելու տեսական և գործնական կարևորություն ունեցող մի շարք գիտական նորույթներ և ընդհանրացումներ.

• Վերլուծելով և համադրելով իմացաբանական-էպիստեմոլոգիական փաստարկների ամբողջությունը՝ բացահայտվել է, որ գիտելիքի անսխալականության պայմանը գործնականում անիրագործելի է և, հետևաբար՝ անհիմն որպես գիտելիքի ստացման և հիմնավորման տեսական պահանջ։ Արդյունքում հիմնավորվում է այն դրույթը, որ իմացության հիմքերում անսխալականության որոնումը պետք է փոխարինել ճանաչողությունում սխալականության հնարավորության ընդունմամբ և դրա հետ աշխատելու տեսական-պրակտիկ մեխանիզմների մշակմամբ։

• Քննարկելով ճանաչողության գործընթացում սուբյեկտիվի դրսևորումների և հավանական սխալականության կապը, ինչպես նաև դրանց ազդեցությունը գիտելիքի օբյեկտիվության վրա՝ ձևակերպվել է սուբյեկտիվության–օբյեկտիվության հակադարձ հարաբերականության սկզբունքը, ըստ որի, որքան բարձր է սուբյեկտիվի դրսևորումների ազդեցությունը ճանաչողության արդյունքի վրա, այնքան մեծ է սխալի հավանականությունը և, համապատասխանաբար, ցածր է գիտելիքի օբյեկտիվության աստիճանը, և հակառակը։ Այս դրույթը հնարավորություն է տալիս ներկայացնել օբյեկտիվության նոր ըմբռնում՝ այն դիտելով ոչ թե որպես ստատիկ, այլ որպես դինամիկ բնութագիր, որը պայմանավորված է ճանաչողությունում սուբյեկտիվի տարրերի և դրանց հետևանքով ի հայտ եկող սխալների հնարավորությամբ, ինչպես նաև դրանց համակարգային նվազեցմամբ։

• Գիտության զարգացման հայեցակարգերի համատեքստում ուսումնասիրելով և վերլուծելով ֆալիբիլիզմի տարատեսակների բնույթը՝ պարզվել է, որ Պիրսի կողմից հայեցակարգայնացված և Փոփերի կողմից զարգացված ֆալիբիլիզմի մոտեցումը ներկայացնում է չափավոր իմացաբանական-էպիստեմոլոգիական դիրքորոշում, որը միաժամանակ մերժում է գիտելիքի նկատմամբ առավելապաշտական պահանջները և

ընդունում գիտելիքի սխալական, սակայն բարելավելի բնույթը: Այս դիտարկումը հնարավորություն է տալիս ներկայացնել ֆալիբիլիզմը որպես հավասարակշռված և ռացիոնալ դիրքորոշում, որը խուսափում է ինչպես դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի, այնպես էլ սկեպտիցիզմի և ռելյատիվիզմի ծայրահեղություններից և սահմանափակություններից:

• Ֆալիբիլիզմի և, մասնավորապես, Պիրսի և Փոփերի ֆալիբիլիզմի պատմահայեցակարգային, խնդրակարգային և մեթոդաբանական վերլուծության արդյունքում ցույց է տրվել, որ ճանաչողության մեջ սխալի հայտնաբերման և համակարգային վերացման արժևորումը, որպես գիտելիքի աճի և գիտության զարգացման նախապայման, հանդիպում է գիտափիլիսոփայական տարբեր ավանդույթներում՝ անկախ դրանց տեսական-համակարգային տարբերություններից: Միևնույն ժամանակ հիմնավորվել է այն դրույթը, որ ֆալիբիլիզմը հանդես է գալիս որպես գիտական գիտելիքի ինքնուղղման և գիտության զարգացման երաշխավորման համագիտական կարգավորող-նորմատիվ սկզբունք:

• Վերլուծելով գիտելիքի հավանական սխալականության և դրա հիմնավորման խնդիրները՝ հիմնավորվել է այն դրույթը, որ ֆալիբիլիզմից տրամաբանորեն բխում է գիտելիքի կիրառման տիրույթի խնդիրը: Դա հնարավորություն է տվել ձևակերպել գիտելիքի կիրառման տիրույթի սկզբունքը, ըստ որի, տրված գիտելիքի իմացաբանական արժեքը որոշարկվում է տվյալ համատեքստում նրա հիմնավորվածության աստիճանի, գործնական նպատակահարմարության, կիրառելիության սահմանների գործոնների համադրման միջոցով:

• Արտաիմացաբանական խնդրակարգում ցույց է տրվել, որ ֆալիբիլիզմը կարող է հանդես գալ որպես իմացաբանական-էպիստեմոլոգիական և մեթոդաբանական հիմք ոչ միայն գիտական, այլ նաև սոցիալ-քաղաքական, կրթական, տեխնոլոգիական և միջգիտակարգային այլ ոլորտներում ու պրակտիկաներում: Այս առնչությամբ նորույթ է այն պնդումը, որ ֆալիբիլիզմը՝ որպես մարդու և գիտելիքի հավանական սխալականության ընդունման դիրքորոշում, կարող է նպաստել հայաստանյան ժամանակակից հանրային և քաղաքական խոսույթների առողջացմանը, ինչպես նաև խթանել հասարակական կյանքի կազմակերպման տարբեր ոլորտներում քննադատական մտածողության, ինտելեկտուալ խոնարհության, պատասխանատու վարքի և բաց երկխոսության արժեքները:

**Պաշտպանության ներկայացված դրույթները:** Ուսումնասիրելով և վերլուծելով ֆալիբիլիզմի ձևավորման պատմական, հայեցակարգային և իմացաբանական-էպիստեմոլոգիական-մեթոդաբանական հիմքերը, քննարկելով գիտության մի շարք արդի հիմնահարցերը, ինչպես նաև համադրելով հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների ու մեկնաբանությունների լայն շրջանակը՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

• Հիմնավորվել է այն դրույթը, որ ֆալիբիլիզմը, որպես գիտության զարգացման և գիտելիքի ստացման իմացաբանական-էպիստեմոլոգիական դիրքորոշում և հայեցակարգ, թույլ է տալիս պահպանել գիտելիքի հուսալիությունն ու անհակասական նկարագիրը՝ ընդունելով գիտելիքի հավանական սխալականությունը, ինչպես նաև ապահովելով ու երաշխավորելով օբյեկտիվ ճշմարտությանը նպատակաուղղված գիտելիքի շարունակական աճը գիտելիքներում սուբյեկտիվի հաղթահարման և դրանց մեթոդաբանական բարելավման ու տեսական վերանայման միջոցով:

• Վերլուծելով անհրաժեշտ գիտելիքի, ֆորմալ-տրամաբանական համակարգերի բնույթը և անսխալական ճանաչողության խնդիրները՝ առաջադրվել է այն դրույթը, որ մաթեմատիկական կամ այլ ֆորմալ համակարգերի անհրաժեշտ գիտելիքի գաղափարը չի ապահովում գիտելիքի անսխալական բնույթը, քանի որ ճանաչողության իրական ու պրակտիկ գործընթացը միջնորդված է մարդկային ճանաչողական կարողություններով՝ պայմանավորվելով գիտելիքի տեսական ազդվածության, սարքային հարաբերականության, ճանաչողությունում սուբյեկտիվի լիարժեք դուրսմղման անհնարինության և այլ հիմնարար ճանաչողական սահմանափակություններով:

• Ուսումնասիրելով և վերլուծելով գիտելիքի անսխալականության ապահովման իմացաբանական-էպիստեմոլոգիական հիմքերը, պայմանները և դրանց վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ գիտելիքի անսխալականության պայմանը գործնականում անիրագործելի է, իսկ գիտելիքի անսխալականության տեսական պահանջը՝ անհիմն: Այս համատեքստում հիմնավորվել է այն պնդումը, որ գիտելիքի անսխալականության պայմանի պահպանումը ոչ միայն անհնար է, այլև մեթոդաբանական առումով ոչ նպատակահարմար: Գիտության զարգացման նպատակից և տրամաբանությունից ելնելով՝ այն պետք է փոխարինել ճանաչողության մեջ սխալի անօտարելի ռիսկն ընդունող հայեցակարգային դիրքորոշմամբ:

• Վերլուծելով գիտելիքի ըմբռնման և հիմնավորման դասական մոտեցումների սահմանափակությունները և գիտելիքի հավանական սխալականության խնդիրները՝ պաշտպանության է ներկայացվել այն դրույթը, որ ֆալիբիլիզմը ներկայացնում է որպես ոչ խիստ, չափավոր, հավասարակշռված և ռացիոնալ իմացաբանական դիրքորոշում, որը թույլ է տալիս խուսափել թե՛ դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի, ինֆալիբիլիզմի, և թե՛ ծայրահեղ սկեպտիցիզմի, ռելյատիվիզմի ու դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի սահմանափակություններից:

• Վերլուծության արդյունքում առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության մեջ դրսևորվում է երկու փոխլրացնող ուղղություններով. (1) որպես իմացաբանական դիրքորոշում և սկզբունք, որը հաղթահարում է դասական իմացաբանության առավելապաշտական պահանջները և գիտելիքի նկատմամբ ձևավորում է սխալական, փոփոխական, վերանայելի ու քննադատական-ռացիոնալ մոտեցում, և (2) որպես գիտական գիտելիքի ինքնուղղումը և

գիտության զարգացումը երաշխավորող ներգիտական և համագիտական կարգավորող-նորմատիվ սկզբունք, որը հանդես է գալիս որպես գիտության զարգացման և գիտական առաջընթացի նախապայման և ինքնանդրադարձով ինքն իրեն ուղղելու ներունակություն։

• Ուսումնասիրելով արտաիմացաբանական խնդրակարգում ֆալիբիլիզմի նշանակությունը՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ ֆալիբիլիզմը, որպես մարդկային սխալականության ընդունում, կարող է ծառայել հանրային մտածողության, հաղորդակցության և կրթական մշակույթի առողջացման իմացաբանական-մեթոդաբանական հիմք՝ խթանելով քննադատական մտածողությունը, ինտելեկտուալ խոնարհությունը, պատասխանատու վարքը և բաց հաղորդակցությունը։

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության շրջանակում ներկայացված հիմնահարցերի վերլուծությունն ու կատարված եզրահանգումները ունեն թե՛ տեսական, թե՛ գործնական կարևորություն և կարող են.

• լրացնել և հարստացնել հայալեզու գիտափիլիսոփայական մտքի շտեմարանը՝ գիտելիքի հավանական սխալականության, ֆալիբիլիստական հայեցակարգի և գիտության զարգացման խնդիրների համակողմանի մեկնաբանությամբ,

• կիրառվել գիտության փիլիսոփայության, իմացաբանության, տրամաբանության և մեթոդաբանության վերաբերյալ հետազոտություններում՝ որպես ֆալիբիլիզմի հայեցակարգի և գիտելիքի հավանական սխալականության համակարգային մեկնաբանություն,

• ծառայել որպես ուսումնաօժանդակ նյութ բուհերում դասավանդվող «Գիտության փիլիսոփայություն», «Իմացաբանություն», «Մեթոդաբանություն», «Գիտության զարգացման հայեցակարգեր» և հարակից դասընթացների համար,

• օգտագործվել գիտական, հասարակական, քաղաքական, կրթական և տեխնոլոգիական գործընթացների հայեցակարգային ուսումնասիրման և դրանց վերաբերյալ քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման համար։

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսության հիմնական գաղափարներն ու դրույթները ներկայացվել ու քննարկվել են ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի տեսական սեմինարների ընթացքում (2022-2024 թթ.), ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի Գևորգ Արշակյանի անվան «Գիտելիքի դպրոց» կրթական նախաձեռնության շրջանակում (2021-2024 թթ.), Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) «Էթիկայի ներածություն» դասընթացի շրջանակում որպես դասավանդման օգնական կատարված պրակտիկայի ընթացքում (2024), ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում Գալուստ Կիլլպէնկեան Հիմնարկութեան աջակցությամբ իրականացված «Փիլիսոփայության դպրոց» կրթական ծրագրի տեսական և գործնական սեմինարների ընթացքում (նոյեմբեր-դեկտեմբեր, 2025), ինչպես նաև Գավառի պետական համալսարանի ամենամյա 25-րդ (հուլիս, 2022), Ռուս-

հայկական համալսարանի տարեկան 16-րդ (դեկտեմբեր, 2022) և ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Փիլիսոփայությունը և արդի մարտահրավերները։ Մարդը գոյաբանական ծուղակում» (նոյեմբեր, 2025) տեղական և միջազգային գիտաժողովների շրջանակում։

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի գիտական հոդվածներում։

Ատենախոսության պլանը քննարկվել է ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնում 2021 թվականի սեպտեմբերին, ամբողջական շարադրանքը՝ 2025-ի դեկտեմբերին, իսկ արդեն 20.02.2026-ին՝ վերջնական քննարկումից հետո, երաշխավորվել է հրապարակային պաշտպանության։

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը։** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ 4-ական ենթագլուխներով, եզրակացությունից և գրականության ցանկից։ Ատենախոսության ընդհանուր ծավալը 184 էջ է։

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, առաջադրվել են գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը։

Առաջին գլուխը՝ **«Ֆալիբիլիզմի զարգացումը փիլիսոփայական ավանդույթներում»** վերտառությամբ, նվիրված է ֆալիբիլիզմի՝ որպես իմացաբանական-էպիստեմոլոգիական հայեցակարգի ձևավորման և զարգացման պատմափիլիսոփայական հիմքերի վերհանմանը, ինչպես նաև գիտության զարգացման համատեքստում դրա հայեցակարգային դերի արժևորմանը։

Առաջին՝ **«Ֆալիբիլիզմի ակունքներն ու զարգացումը անտիկ հունական և նոր շրջանի փիլիսոփայությունում»** ենթագլխում հանգամանալից վերլուծության են ենթարկվում ֆալիբիլիզմի՝ որպես իմացաբանական-էպիստեմոլոգիական հայեցակարգի ձևավորման պատմափիլիսոփայական նախադրյալները։ Ուսումնասիրելով ֆալիբիլիզմը որպես մարդու ճանաչողական կարողությունների անկատարությունը և ճանաչողությունում սխալի հավանական ռիսկի անօտարելիությունը բնորոշող հայեցակարգ և սկզբունքների ամբողջություն՝ եզրակացվում է, որ ֆալիբիլիզմն ունի իմացաբանական-էպիստեմոլոգիական խորքային արմատներ ինչպես անտիկ հունական, այնպես էլ նոր շրջանի փիլիսոփայական ավանդույթներում։ Ենթագլխում ցույց է տրվում, որ, ի հակադրություն անտիկ դոգմատիկական և ինֆալիբիլիստական ուսմունքների, որոնք հետամուտ էին

բացարձակ և անսխալական իմացական հիմքերի որոնմանը, ֆալիբիլիզմի նախատիպային մոտեցումները ձևավորվել են անտիկ հունական մեղմ կամ չափավոր սկեպտիցիզմի շրջանակներում։

Վերլուծելով հունական փիլիսոփայության ներկայացուցիչներ Կարնեադեսի, Փիլոն Լարիսացու և Սեքստ Էմպիրիկոսի իմացաբանական հայացքները՝ հիմնավորվում է, որ նրանք անտիկ հունական փիլիսոփայական միջավայրում առաջիններից էին, ովքեր հրաժարվել են ճշմարտության միանշանակ չափանիշի և իմացական անսխալական հիմքերի պահանջից՝ փոխարենն առաջարկելով հիմնավոր և համոզիչ տպավորությունների կամ հավանական ճշմարտության գաղափարը։ Մեղմելով ակադեմիական սկեպտիցիզմի ծայրահեղությունները՝ այս մտածողներն առաջադրում են մի տեսակետ, ըստ որի՝ թեև գիտելիքը չի կարող ունենալ բացարձակ և անսխալական հիմքեր, այնուամենայնիվ, հնարավոր է ունենալ գիտելիք, որը հենված է հերքելի, բայց բավարար հիմնավորումների վրա։

Անցում կատարելով նոր շրջանի փիլիսոփայությանը՝ ենթագլխում հանգամանալից վերլուծվում է Ռենե Դեկարտի մեթոդաբանական կասկածի դերը ֆալիբիլիզմի զարգացման գործում։ Հիմնավորվում է այն թեզը, որ ֆալիբիլիզմի տարրերը մեթոդաբանական սկեպտիցիզմի հետ միասին Դեկարտի իմացաբանական համակարգում սանդուղքի դեր են կատարում՝ ապահովելով անցում սկեպտիցիզմից դեպի ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի։ Ենթագլխի առանցքային մաս է կազմում նաև Դեյվիդ Հյումի ինդուկտիվ սկեպտիցիզմի և ֆալիբիլիզմի կապի վերլուծությունը։ Քննարկելով ինդուկցիայի հիմնախնդիրը՝ հիմնավորվում է այն պնդումը, որ Հյումը վճռական հարված է հասցնում գիտելիքի հիմնավորման դասական՝ ինֆալիբիլիստական իդեալին՝ ցույց տալով, որ փորձնական տվյալներից բխող ոչ մի ընդհանրացում չի կարող լինել անսխալական, ինչպես նաև իմացաբանորեն և տրամաբանորեն երաշխավորված։

Ամփոփելով ենթագլուխը՝ եզրակացվում է, որ փիլիսոփայական ավանդույթներում ֆալիբիլիզմի զարգացումը ընթացել է գիտելիքի անսխալականության ապահովման դասական պահանջների աստիճանական թուլացման և ճանաչողության մեջ սխալի անխուսափելիության գիտակցման ճանապարհով։ Անտիկ հունական փիլիսոփայական ավանդույթներում մեղմ սկեպտիցիզմի արժևորումը, Դեկարտի մեթոդաբանական կասկածը և Հյումի ինդուկտիվ սկեպտիցիզմը դիտվում են որպես անհրաժեշտ պատմական և տեսական նախադրյալներ, որոնք նախապատրաստել, ձևավորել և կանխադրել են գիտական ճանաչողության ու գիտելիքի հիմնավորման ֆալիբիլիստական ժամանակակից ըմբռնումը որպես ինքնուրույն և ամբողջական իմացաբանական-էպիստեմոլոգիական հայեցակարգ։

Երկրորդ՝ **«Ֆալիբիլիզմի զարգացումը Չարլզ Պիրսի փիլիսոփայությունում»** ենթագլխում քննության է առնվում ֆալիբիլիզմի՝ որպես ինքնուրույն և ամբողջական հայեցակարգի ձևավորումը Չ. Ս. Պիրսի իմացաբանական համակարգում։ Պիրսյան

ֆալիբիլիզմի հիմքում առանցքային է այն գաղափարը, որ ճանաչողությունը չի կարող սկսվել համընդհանուր կասկածից, և չի կարող հիմնվել անսխալական հիմքերի վրա։ Փոխարենը պետք է մեկնարկել սխալական և բազիսային համոզմունքներից, որոնք ենթակա են բարեփոխման և վերանայման միայն իրական, կենսական փորձից բխող կասկածի միջոցով։ Պիրսն այս կերպ ֆալիբիլիզմը հստակորեն տարանջատում է ծայրահեղ սկեպտիցիզմից և նաև խուսափում ֆունդամենտալիզմի ու ինֆալիբիլիզմի սահմանափակություններից։

Պիրսյան ֆալիբիլիզմի վերլուծությունը ցույց է տալիս, որ նա սխալականության հիմքում նախևառաջ ընդունում է մարդկային ճանաչողական կարողությունների և ճանաչողության մեթոդի սահմանափակությունները՝ եզրակացնելով, որ մենք որևէ հարցի ու երևույթի վերաբերյալ երբեք չեն կարող հասնել համընդհանուր, բացարձակ և անսխալական համոզմունքների և գիտելիքի։

Հատկանշական է ապրիորի և անհրաժեշտ ճշմարտությունների (մաթեմատիկական, տրամաբանական) կարգավիճակի հիմնահարցի վերաբերյալ պիրսյան մոտեցման վերլուծությունը, որտեղ Պիրսը, մի կողմից ընդունում է դրանց տեսական անսխալականությունը, մյուս կողմից՝ մարդկային ճանաչողության սահմանափակությունը և ճանաչողությունում սուբյեկտիվի գործոնի դերը։ Արդյունքում Պիրսը մաթեմատիկական պնդումները երբեմն դիտում է որպես գործնականում սխալական՝ ենթակա հավանական սխալի, ու վերանայելի, և երբեմն էլ դրանք համարում տեսականորեն անսխալական՝ առաջացնելով որոշակի անհամապատասխանություն ֆալիբիլիզմի կիրառման տիրույթի հստակեցման հարցում։

Ամփոփելով ենթագլուխը՝ եզրակացվում է, որ Պիրսի ֆալիբիլիզմը ոչ խիստ, չափավոր իմացաբանական դիրքորոշում է, որը հավասարակշռում և հարթում է ծայրահեղ ու առավելապաշտական մոտեցումներ ունեցող հայեցակարգերի՝ մի կողմից դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի, իսկ մյուս կողմից ծայրահեղ սկեպտիցիզմի դիրքորոշումները։

Երրորդ՝ **«Ֆալիբիլիզմի զարգացումը Կառլ Փոփերի իմացաբանության և գիտության փիլիսոփայության մեջ»** ենթագլխում քննության է առնվում սխալականության հայեցակարգի հետագա զարգացումը քննադատական ռացիոնալիզմի շրջանակներում՝ հիմնավորելով, որ Կ. Փոփերի ֆալիբիլիզմը վերածվում է գիտական հետազոտության, ինչպես նաև գիտելիքի աճի ու գիտության զարգացման ապահովման մեթոդաբանական հիմնարար սկզբունքի։ Ենթագլխում ցույց է տրվում, որ փոփերյան ֆալիբիլիզմը ձևավորվել է տրամաբանական պոզիտիվիզմի, մասնավորապես՝ ինդուկտիվիզմի և վերիֆիկացիոնիզմի (ջաստիֆիկացիոնիզմի) քննադատության հիման վրա, ինչպես նաև դասական իմացաբանության ինդուկցիայի և դեմարկացիայի հիմնախնդիրների վերաիմաստավորման և վերաձևակերպման արդյունքում։

Պետք է արձանագրել, որ նախորդ բոլոր հայեցակարգերը ծայրահեղ ու առավելապաշտական են իրենց նպատակներում և պահանջներում։ Հայեցակարգերի մի մասի ըմբռնմամբ՝ գիտությունը ձգտում է անսխալական գիտելիքի և առանձին դեպքերում կարողանում է հասնել այդպիսի իմացությանը։ Սակայն այս հայեցակարգերից և ոչ մեկը չի կարողանում ապահովել բացարձակ, հիմնավոր ու անկասկածելի իմացությունը երաշխավորող իմացական անհրաժեշտ հիմքեր։ Այլ հայեցակարգեր, հիմք ընդունելով բացարձակ ճշմարտության ու վերջնականապես անսխալական իմացության անհնարինությունը, կասկածի տակ են առնում գիտական ճանաչողությունն ընդհանրապես։ Արդյունքում Փոփերը մերժում է երկու ծայրահեղ մոտեցումները՝ հրաժարվելով գիտելիքի հիմնավորման ջաստիֆիկացիոնիստական պահանջից, ինդուկտիվիստական վերիֆիկացիոնիզմի մեթոդից և ֆալիբիլիստական իմացաբանության շրջանակում զարգացնելով ոչինդուկտիվիստական ֆալսիֆիկացիոնիզմի մեթոդը՝ այդ կերպ հերքելիությունը առաջարկելով որպես դեմարկացիայի նոր չափանիշ։

Կարևոր է արձանագրել այն, որ Փոփերի ֆալիբիլիզմի տեսահայեցակարգային մոտեցումից բխում է գիտելիքի նկատմամբ ֆունդամենտալիստական և ջաստիֆիկացիոնիստական պահանջների անհիմնավորվածությունը։ Արդյունքում գիտելիքը ոչ միայն չի կարող հիմնվել բացարձակ և անսխալական հիմքերի վրա, այլև գիտելիքը որպես պայման չի պահանջում բացարձակ որոշակիություն և անսխալականություն։ Այս համատեքստում ցույց է տրվում, որ Փոփերի իմացաբանական-էպիստեմոլոգիական համակարգում ֆալիբիլիզմը զարգանում է երկու հիմնական ուղղություններով։ Առաջին դեպքում ֆալիբիլիզմը դիտվում է որպես իմացաբանական-էպիստեմոլոգիական հայեցակարգ և բազիսային սկզբունք փիլիսոփայության արդի հիմնախնդիրների վերահիմաստավորման և դասական իմացաբանությունից ու այլ հայեցակարգերից բխող սահմանափակությունների և ծայրահեղությունների հաղթահարման համար։ Երկրորդ դեպքում ֆալիբիլիզմը Փոփերի իմացաբանությունում ընդունվում է որպես գիտության համար հարացուցային նշանակություն ունեցող համընդհանուր իմացաբանական նախապայման և կանոն, որն ապահովում է ֆալիբիլիստական սկզբունքների տեղայնացումը և դրանց մեթոդաբանական-կարգավորող ու նորմատիվ գործառույթների կիրառումը գիտական պրակտիկայում։

Չորրորդ՝ **«Ֆալիբիլիզմը գիտության զարգացման հայեցակարգերի համատեքստում. հայեցակարգային վերլուծություն»** ենթագլխում իրականացվում է գիտության զարգացման մրցակցող հայեցակարգերի համեմատական վերլուծություն՝ նպատակ ունենալով հստակեցնել ֆալիբիլիզմի իմացաբանական դիրքորոշումը, դրա խնդիրներն ու առավելությունները, ինչպես նաև իմացաբանական-մեթոդաբանական կարգավիճակը հակադիր և մրցակցող հայեցակարգերի համատեքստում։

Գիտության զարգացման հայեցակարգերի և ֆալիբիլիզմի իմացաբանական դիրքորոշումների համեմատական վերլուծության արդյունքում հնարավոր եղավ հիմնավորել անհերքելի, անսխալական և բացարձակ իմացական հիմքերի անհնարինությունը, ինչպես նաև անսխալական գիտելիքի պայմանը պահանջող հայեցակարգերի իմացաբանական դիրքորոշումների խնդիրներն ու սահմանափակությունները: Արդյունքում գիտելիքի անսխալականության պայմանի բավարարման անհնարինության ընդունումը ստիպում է մեզ հրաժարվել նաև գիտելիքի անսխալականության պայմանի պահանջից:

Վերլուծության արդյունքում հնարավոր եղավ բացահայտել ինֆալիբիլիզմի և ֆալիբիլիզմի հայեցակարգային հակադրության էությունը: Մի շարք փաստարկների համադրման արդյունքում եզրակացվեց, որ ինֆալիբիլիզմն իր խիստ տարբերակով, ի դեմս Կարտեզյան ինֆալիբիլիզմի, բախվում է մի շարք իմացաբանական-էպիստեմոլոգիական խոչընդոտների՝ չկարողանալով ապահովել անսխալական գիտելիքի պայմանը:

Կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ սկեպտիցիզմը և ռելյատիվիզմն ի վերջո հանգում են իմացաբանական փակուղու, քանի որ սկեպտիցիզմը, ընդունելով անսխալականության անհնարինությունը, մերժում է գիտելիքի հնարավորությունն առհասարակ, իսկ ռելյատիվիզմը, ժխտելով ճշմարտության օբյեկտիվ չափանիշները, կա՛մ հանգում է սուբյեկտիվ ինֆալիբիլիզմի, կա՛մ իմացաբանական նիհիլիզմի: Արդյունքում հիմնավորվում է այն պնդումը, որ և՛ Պիրսի, և՛ Փոփերի զարգացրած ֆալիբիլիզմը ոչ խիստ, չափավոր իմացաբանական դիրքորոշում է, որը հնարավորություն է տալիս համատեղել երկու հիմնարար իրողություններ. գիտելիքի հավանական սխալականության ու գիտության առաջընթացի հնարավորությունը: Ի տարբերություն լավատեսական և վատատեսական ծայրահեղ հայեցակարգերի, ֆալիբիլիզմը խուսափում է գիտելիքի վերաբերյալ առավելապաշտական հավակնություններից՝ միաժամանակ ընդունելով թե՛ գիտելիքի անկատարությունը, թե՛ դրա շարունակական զարգացման և ճշմարտությանը մոտենալու հնարավորությունը օբյեկտիվության ապահովման և սուբյեկտիվի հաղթահարման միջոցով:

Երկրորդ՝ **«Ֆալիբիլիզմը գիտության զարգացման արդի հիմնահարցերում»** վերտառությամբ գլուխը նվիրված է գիտության փիլիսոփայության առանցքային հիմնախնդիրների՝ ճշմարտության, օբյեկտիվության, գիտության նպատակի, գիտելիքի հիմնավորման, գիտական առաջընթացի ու գիտության փոփոխության հիմնախնդիրների քննությանը և վերահիմաստավորմանը ֆալիբիլիստական իմացաբանական-մեթոդաբանության լույսի ներքո: Սույն գլխում հիմնավորվում է այն դրույթը, որ ֆալիբիլիզմը թույլ է տալիս հաղթահարել դասական իմացաբանության ջաստիֆիկացիոնիստական և ինֆալիբիլիստական սահմանափակությունները՝ առաջադրելով գիտելիքի հավանական սխալականության և դինամիկ օբյեկտիվության գաղափարները, որտեղ ճշմարտությունն ու օբյեկտիվությունն իրենց բացարձակ

իմաստով գործնականորեն անհասանելի են, բայց որոնք, այնուամենայնիվ, հանդես են գալիս որպես հետազոտության կարգավորող ուղենիշեր և կատարելատիպեր: Համակողմանի վերլուծության են ենթարկվում գիտության փոփոխության և առաջընթացի մրցակցող մոդելները, ինչպես նաև քննարկվում ֆալիբիլիզմի կիրառելիությունը արտահմացաբանական տիրույթներում՝ այն դիտարկելով որպես սոցիալ-քաղաքական, կրթական և էթիկական ոլորտներում քննադատական մտածողության և հանրային առողջ երկխոսության իմացաբանական-մեթոդաբանական հիմք:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Ճշմարտության, օբյեկտիվության և գիտության նպատակի հիմնախնդիրների ֆալիբիլիստական մեկնաբանությունը»** ենթագլխում քննարկվում է ֆալիբիլիզմի դերը ոչ դասական իմացաբանության շրջանակում ճշմարտության, գիտական գիտելիքի օբյեկտիվության և գիտության նպատակի հիմնախնդիրների հասկացման և վերահմաստավորման գործում: Եթե դասական իմացաբանության շրջանակում օբյեկտիվ ճշմարտությունը համարվում էր ճանաչողության նպատակը և նույնիսկ երբեմն դրա հասանելի արդյունքը, ապա պրագմատիզմի որոշ ներկայացուցիչներ ճշմարտությունը հանգեցնում էին «նպատակահարմարությանը»՝ փաստացի հրաժարվելով օբյեկտիվ ճշմարտությունից որպես հետազոտության նպատակ: Հենց այս համատեքստում հիմնավորվում է այն դրույթը, որ ճշմարտության այլ տեսությունների կողքին ֆալիբիլիզմը հանդես եկավ որպես նոր հարացույց, որը թույլ է տալիս պահպանել օբյեկտիվ ճշմարտության գաղափարը՝ առանց դոգմատիզմի կամ ռելյատիվիզմի ծայրահեղությունների մեջ ընկնելու:

Կարևոր է արձանագրել այն, որ պիրսյան և փոփերյան ֆալիբիլիզմը վերականգնում է ճշմարտության կարգավիճակը որպես գիտության կարգավորող ուղենիշ և կատարելատիպ: Ֆալիբիլիզմի շրջանակում պահպանվում է ինչպես ճշմարտության տեսության համապատասխանության սկզբունքը, այնպես էլ բացարձակ, օբյեկտիվ ճշմարտության գաղափարը, որը Պիրսի և Փոփերի ֆալիբիլիստական հայեցակարգերի շրջանակում վեր է ածվում գիտության նպատակի և կատարելատիպի՝ ստանալով նորմատիվ-արժեքային և կարգավորող գործառույթներ:

Ենթագլխում քննադատական վերլուծության են ենթարկվում նաև ֆալիբիլիզմի և ճշմարտության հարաբերակցության վերաբերյալ հակափաստարկները և եզրակացվում, որ անսխալականության պահանջից հրաժարումը չի նշանակում հրաժարում ճշմարտության գաղափարից: Արդյունքում հիմնավորվում է այն պնդումը, որ ճշմարտության ֆալիբիլիստական հարացույցը վերահմաստավորում է գիտելիքի ըմբռնումը. այն ձևավորվում է բաց, քննադատելի և միջսուբյեկտիվորեն վերահսկվող փոխազդեցությունների դաշտում, որտեղ յուրաքանչյուր պնդում ենթակա է վերանայման:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Գիտելիքի հիմնավորման հիմնախնդիրը և ֆալիբիլիզմը»** ենթագլխում քննարկվում է գիտելիքի հիմնավորման իմացաբանական-էպիստեմոլոգիական խնդիրը դասական ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի ճգնաժամի և հավանական սխալականության մոտեցման համատեքստում: Այս առնչությամբ արձանագրվում է, որ գիտելիքի հիմնավորման հարցում անվերջ հետընթացի խնդիրը լուծելու նպատակով բացարձակ և անսխալական հիմքերի որոնումը դատապարտված է ձախողման, քանի որ մարդկային ճանաչողությունը զուրկ է նման արտոնյալ հիմքերից, և ցանկացած հիմնավորում ի վերջո հանգում է ճշգրտման ենթակա համոզմունքների: Որպես այլընտրանք՝ զարգացվում է ֆալիբիլիստական մոտեցումը, ըստ որի՝ հնարավոր է ունենալ հիմնավոր, բայց սխալական գիտելիք, որտեղ հիմնավորվածությունը չի ենթադրում տրամաբանական անսխալականություն, այլ կշռադատությունների տվյալ համակարգում բավարար հիմնավորում, որը համատեղելի կլինի սխալի հնարավորության հետ:

Ենթագլխում մանրամասն վերլուծվում են ֆալիբիլիզմի ներքին տեսական լարվածությունները, մասնավորապես՝ «զիջողական գիտելիքի վերագրման» և գիտելիքի հիմնավորման շեմի խնդիրները: Քննադատական վերլուծության են ենթարկվում Դ. Լևիսի կոնտեքստուալիզմը, Ս. Հեթերինգթոնի գրադուալիզմը և Մ. Հենոնի իմպուրիզմը՝ ցույց տալով, որ ֆալիբիլիզմը կարող է ապահովել գիտելիքի անհակասական նկարագիրը՝ առանց սկեպտիցիզմին և ֆունդամենտալիստական-ինֆալիբիլիստական իմացաբանական մոտեցումներին հանգելու:

Այս վերլուծությունների հիման վրա ձևակերպվում է ատենախոսության առանցքային դրույթներից մեկը՝ *գիտելիքի կիրառման տիրույթի խնդիրը*, որը տրամաբանորեն բխում է հավանական սխալականության գաղափարից: Քանի որ ոչ մի գիտելիք կամ տեսություն չի կարող անսխալականորեն հաստատվել կամ հերքվել, ապա մերժված կամ սահմանափակ համարվող տեսությունները ամբողջապես չեն վերանում, այլ ճշգրտվում են դրանց կիրառության շրջանակն այն տիրույթներում, որտեղ դրանք առնվազն մեկ հիմնավորմամբ կարող են ունենալ բավարար ճշգրտություն և գործնական օգտակարություն գիտելիքի որևէ տիրույթի ճանաչողական նպատակների համար: Այսպիսի մոտեցմամբ գիտելիքի կիրառման տիրույթի սկզբունքն ապահովում է ֆալիբիլիզմի ներքո փոփերյան մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմի և արդիականացված ջաստիֆիկացիոնիզմի ֆունկցիոնալ համատեղումը:

Երրորդ՝ **«Ֆալիբիլիզմը գիտական առաջընթացի և գիտության փոփոխության հիմնախնդիրների համատեքստում»** ենթագլխում քննարկվում են գիտական առաջընթացի և գիտության փոփոխության հիմնախնդիրների վերաբերյալ դասական և ոչ դասական իմացաբանության հայեցակարգային մոտեցումները և հավանական սխալականության դերը հիմնախնդիրների վերահիմաստավորման ու հնարավոր լուծումների նախանշման համատեքստում:

Դեռևս Պիրսի և Փոփերի վաղ աշխատանքներում զարգացվում է գիտական առաջընթացի հակակումուլյատիվիստական մոտեցումը, քանի որ գիտության պատմությունը վկայում է մեթոդների և տեսությունների պարբերական փոփոխության մասին: Սակայն, ինչպես հնարավոր եղավ ցույց տալ և հիմնավորել, թեև գիտության զարգացման տարբեր մոդելներ հեղինակած մտածողները բացահայտ կերպով մերժում են գիտության համընդհանուր և անփոփոխ մեթոդի գոյության հնարավորությունը, *իրենց տեսության շրջանակում նրանք լռելյայն և ներակա կերպով ընդունում են իրենց կողմից մշակված մեթոդաբանությունը որպես գիտության միակ ճշմարիտ ու համընդհանուր մեթոդ և կանոնների ամբողջություն՝ հաճախ ցանկալի մեթոդաբանությունը նույնացնելով գիտության փաստացի կիրառվող մեթոդի հետ:* Այս առնչությամբ կարևոր է արձանագրել այն հիմնավոր փաստը, որ գիտական խճանկարում բոլոր տարրերը՝ թե՛ տեսությունները, թե՛ մեթոդները, ենթակա են փոփոխման, և որևէ տարր չունի երաշխավորված կամ անձեռնմխելի տեղ գիտական համակարգում, քանի որ ոչ մի դրույթ զերծ չէ սխալի կամ սխալվելու անօտարելի ռիսկից:

Ենթագլխում կատարվում է գիտության փոփոխության և առաջընթացի մրցակցող մոդելների (Չ. Պիրս, Կ. Փոփեր, Թ. Կուն, Ի. Լակատոս, Լ. Լաուդան, Հ. Բարսեղյան) համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում կատարվում է եզրահանգում այն մասին, որ գիտության փոփոխության և գիտական առաջընթացի վերաբերյալ նախորդ բոլոր մոտեցումների հիմնական սահմանափակումները բխում են գիտելիքի անսխալականության և անփոփոխ գիտական մեթոդի առկայության վերաբերյալ հաճախ լռելյայն ու ներակա կերպով ընդունված ինֆալիբիլիստական ենթադրություններից: Գիտական մեթոդի ինֆալիբիլիստական բնույթի պայմանից և գիտական խճանկարի տարրերի բացարձակ համատեղելիության (անհակասականության) պահանջից ձերբազատվելու դեպքում հնարավոր է ստանալ ֆալիբիլիստական իմացաբանության վրա հիմնվող գիտության փոփոխության և առաջընթացի անհակասական և դինամիկ պատկեր: Ներկայացված մոդելի շրջանակում ֆալիբիլիզմը գիտության փոփոխության, գիտական առաջընթացի և գիտելիքի աճի համար ունի նորմատիվ-կարգավորող դեր՝ սահմանելով գիտական հետազոտության ռացիոնալության չափանիշները և ապահովելով գիտելիքի շարունակական վերանայման հնարավորությունը:

Երկրորդ գլխի չորրորդ՝ **«Ֆալիբիլիզմը արտահիմացաբանական ոլորտներում»** ենթագլխում ֆալիբիլիզմը դիտարկվում է ոչ միայն որպես իմացաբանական-էպիստեմոլոգիական հայեցակարգ, այլև որպես աշխարհում ճանաչող մարդու տեղը և դերը իմաստավորող, ինչպես նաև գիտելիքի ձեռքբերումը, գիտական պրակտիկան ու ճանաչողությունը կարգավորող աշխարհայացքային-արժեքային կողմնորոշիչ և նորմատիվ սկզբունք, որը ենթադրում է «ինտելեկտուալ խոնարհություն» և սեփական սխալականության գիտակցում:

Վերլուծվում է ֆալիբիլիզմի կիրառելիությունը սոցիալ-քաղաքական ոլորտում՝ հենվելով Կ. Փոփերի «բաց հասարակության» և «փոքր քայլերով սոցիալական ինժեներիայի» գաղափարների վրա, որոնք հակադրվում են ուտոպիստական և ամբողջատիրական մոտեցումներին՝ քաղաքականությունը դիտարկելով որպես սխալների ինստիտուցիոնալ ուղղման և առանց բռնության բարեփոխումների իրականացման մեխանիզմ:

Կրթական և էթիկական հարթություններում հիմնավորվում է, որ ֆալիբիլիզմը խթանում է կառուցողական քննադատական մտածողությունը՝ սխալը դիտարկելով ոչ թե որպես ձախողում, այլ որպես ուսուցման և ինքնակատարելագործման ռեսուրս: Այս համատեքստում կարևորվում է սխալներից սովորելու ինստիտուցիոնալ մշակույթի ձևավորումը, որտեղ բարեփոխումների հաջողությունը չափվում է քննադատության և դրա հիման վրա արդյունավետ բարելավման, այլ ոչ թե անսխալականության աստիճանով:

Աշխատանքում հատուկ անդրադարձ է կատարվում հայաստանյան հանրային խոսույթի առողջացման խնդրին՝ ցույց տալով, որ հետճշմարտային (post-truth) հասարակական կարգում ֆալիբիլիստական մոտեցումը կարող է հաղթահարել դոգմատիզմը և անհանդուրժողականությունը՝ հանրային երկխոսությունը տեղափոխելով փաստարկվածության և փոխադարձ հարգանքի դաշտ, որտեղ ընդունվում է սխալվելու և ուղղվելու հնարավորությունը:

Ընդհանրացնելով այս ենթագլխի վերլուծության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումը՝ կարելի է հիմնավոր համարել այն պնդումը, որ ֆալիբիլիզմը վեր է ածվում մտածելու և գործելու այնպիսի բարոյական-արժեքային-աշխարհայացքային կերպի, որը միավորում է մարդկային սխալականության, ճանաչողության սահմանափակության, ինստիտուցիոնալ զարգացման և հանրային հաղորդակցության հարթությունները՝ ապահովելով քննադատության, բարեփոխման և առաջընթացի շարունակականությունը թե՛ անհատական, թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ հանրային կյանքում:

**Եզրակացությունում** ամփոփվում են ատենախոսության արդյունքները, կատարվում տեսական ընդհանրացումներ, որոնց հիման վրա առանձնացվել են հետևյալ դրույթները՝

- Ֆալիբիլիզմն ունի խորքային իմացաբանական-էպիստեմոլոգիական արմատներ փիլիսոփայական ավանդույթներում, որի հայեցակարգային տարրերը ձևավորվել են դեռևս անտիկ հունական մտածողության շրջանակում՝ մեղմ կամ չափավոր սկեպտիցիզմի հիմքի վրա: Կարնեադեսի, Փիլոնի և Էմպիրիկոսի ուսմունքները ձևավորեցին ժամանակակից ֆալիբիլիզմի պատմական և տեսական հենքը, որոնց հայեցակարգային տարրերը հետագայում վերաիմաստավորվեցին Դեկարտի մեթոդաբանական կասկածի, Հյումի ինդուկտիվիզմի և Պիրսի իմացաբանության շրջանակում: Արդյունքում ֆալիբիլիզմը կառուցարկվեց որպես

դոգմատիզմին և սկեպտիցիզմին հակակշռող մեղմ իմացաբանական մոտեցում, որը բարձր է գնահատում ոչ կամայական, հիմնավորված և ճանաչողական դժվարություններից բխող կասկածը որպես գիտելիքի բարելավման և գիտական առաջընթացի անհրաժեշտ պայման։

• Ֆալիբիլիզմի օգտին առկա իմացաբանական-էպիստեմոլոգիական մի շարք փաստարկների համադրման արդյունքում հնարավոր եղավ արձանագրել գործնականում անսխալական, անհերքելի և բացարձակ իմացական հիմքերի ապահովման անհնարինությունը, ինչպես նաև գիտելիքի անսխալականությունն անվերապահ ընդունող հայեցակարգերի խնդիրներն ու սահմանափակումները։ Արդյունքում գիտելիքի անսխալականության պայմանի մերժումը ստիպում է հրաժարվել նաև գիտելիքի անսխալականության պայմանի պահանջից։

• Վերլուծության արդյունքում բացահայտվեց, որ ֆալիբիլիզմը, ի դեմս Պիրսի և Փոփերի հայեցակարգերի, ոչ խիստ, չափավոր իմացաբանական-էպիստեմոլոգիական դիրքորոշում է, որը հնարավորություն է տալիս մեկնաբանել գիտելիքի հավանական սխալականության և, թեև սխալի հնարավորությանը ենթակա, բայց հիմնավոր իմացություն ունենալու և այն շարունակաբար բարելավելու հնարավորությունը։ Այսպիսի հավասարակշռված դիրքորոշումը թույլ է տալիս ֆալիբիլիզմին խուսափել առավելապաշտությանը հակված լավատեսական հայեցակարգերի՝ դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի, ջաստիֆիկացիոնիզմի, ինֆալիբիլիզմի, ինչպես նաև վատատեսական հայեցակարգերի՝ ծայրահեղ սկեպտիցիզմի, ռելյատիվիզմի ու դոգմատիկական ֆալսիֆիկացիոնիզմի հայեցակարգային խնդիրներից և սահմանափակություններից։

• Ճշմարտության հիմնախնդրում դասական մոտեցումների վերլուծության արդյունքում կատարվեց եզրահանգում այն մասին, որ դրանց կողքին ֆալիբիլիզմն առաջարկում է սկզբունքորեն նոր դիրքորոշում, որի շրջանակում օբյեկտիվությունը մեկնաբանվում է որպես այն անհրաժեշտ միջանկյալ «կայարանը», որով իմացությունն անհրաժեշտաբար պետք է անցնի ճշմարտության վերջնանպատակին հասնելու համար։ Այս իմաստով բացարձակ օբյեկտիվությունը գործնականում հասանելի չէ ճանաչողությունում սուբյեկտիվի և հնարավոր սխալների լիարժեք դուրսմղման անհնարինության պատճառով, սակայն այն հարթում է ճանապարհը դեպի ճշմարտություն՝ առանց երաշխավորելու դրա ձեռքբերման գործնական և տեսական հնարավորությունը։ Միաժամանակ, ճշմարտությունը չի կորցնում իր կենտրոնական դերը. այն պահպանվում է որպես կարգավորող իդեալ և համընդհանուր ուղենիշ, որն ուղղորդում է մեթոդաբանական պրակտիկան և վերահմաստավորում գիտական առաջընթացի ըմբռնումը սխալների համակարգային նվազեցման ու բացատրական/կանխատեսական կարողության աճի միջոցով՝ պահպանելով գիտական ճանաչողության համար վերջնանպատակի կարգավիճակը։

• ֆալիբիլիստական իմացաբանության շրջանակում գիտելիքը դադարում է ընկալվել որպես անսխալականորեն հիմնավոր և անփոփոխ ճանաչողական վերջնարդյունք և փոխարենը ստանում է ոչ ստատիկ բնութագիր՝ իր ուժն ու իմացաբանական արժեքը ձեռք բերելով կոնկրետ կիրառման պայմաններում և գործնական հետևանքներում: Այս ընկալումը գիտելիքին տալիս է շարժուն, բայց ոչ կամայական բնույթ՝ թույլ տալով բացատրել, թե ինչու են որոշ տեսություններ կամ համոզմունքներ իմացության որոշակի սահմանափակ տիրույթներում մնում հիմնավոր, ճշմարիտ և կիրառելի, մինչդեռ դրանցից դուրս դրանք կորցնում են իրենց հիմնավորվածության ուժը և ճշմարտության որոշարկված արժեքը: Հենց այս իմաստով է ֆալիբիլիզմը համադրելի և համատեղելի դառնում կոնտեքստուալիստական, ռելիաբիլիստական, գրադուալիստական և պրագմատիկական մոտեցումների հետ: Ասվածից բխում է, որ ֆալիբիլիզմը կարող է ապահովել գիտելիքի անհակասական նկարագիրը՝ թույլ տալով խոսել սխալական հիմնավորումներով սխալական գիտելիքի մասին առանց գիտելիքի ֆունդամենտալիստական-ինֆալիբիլիստական պահանջների անհրաժեշտության և առանց կասկածապաշտական փակուղի վերադառնալու:

• Վերլուծելով գիտության արդի հիմնախնդիրները՝ աշխատանքում արձանագրվում է, որ ֆալիբիլիզմի իմացաբանական-մեթոդաբանական գործառույթներն իրենց առավել նշանակալի դրսևորումը ստացել են գիտության զարգացման հետևյալ կարևոր իրադարձություններում՝ երբ գիտելիքի անսխալականության պահանջը փոխարինվեց հավանական սխալականության ընդունմամբ, և ապա երբ գիտության համընդհանուր և անփոփոխ մեթոդի գաղափարը փոխարինվեց դինամիկ մեթոդի գաղափարով: Այս երկու շրջադարձերում ֆալիբիլիզմը կանխել է դոգմատիզմին հանգեցնող փակուղիները, որոնք առաջանում են, երբ գիտությունը հավակնում է հիմնավորվել բացարձակ սկզբունքների և իմացական հիմքերի վրա՝ անհնարին դարձնելով գիտության փոփոխության և գիտական առաջընթացի գործընթացները, տեսական մրցակցությանը, բաց քննադատությանը գիտական պրակտիկայում: Այս բոլոր նկատառումներից հետևում է, որ ինֆալիբիլիզմից հրաժարումը ոչ միայն վերացնում է անփոփոխ մեթոդի դոգմատիկ պահանջը, այլև բացում է գիտության զարգացման իրական հնարավորությունները: Արդյունքում ֆալիբիլիզմը, որպես մեթոդաբանական-կարգավորող ու նորմատիվ սկզբունք, դառնում է գիտական առաջընթացի և գիտության փոփոխության իմացաբանական նախապայման՝ ապահովելով գիտության ներքին տրամաբանության ճկունությունը, բազմաձևությունը, ինքնանդրադարձով ինքն իրեն ուղղելու ներունակությունը:

• Վերլուծելով ֆալիբիլիզմը արտահիմացաբանական խնդրակարգի համատեքստում՝ աշխատանքում հիմնավորվում է այն պնդումը, որ ֆալիբիլիզմը կարող է կիրառվել բավականին լայն տիրույթում՝ չսահմանափակվելով զուտ իմացաբանական-էպիստեմոլոգիական խնդրակարգով և կիրառվելով ինչպես հասարակական խնդրակարգում, այնպես էլ միջգիտակարգային այլ ոլորտներում: Ֆալիբիլիզմի

աշխարհայացքային-արժեքային, ինչպես նաև իմացաբանական-մեթոդաբանական գործառույթների հիմքում առանձնացվեցին (1) իմացաբանական, (2) մեթոդաբանական, (3) էթիկական-արժեքային, (4) սոցիալ-քաղաքական, (5) էկզիստենցիալ և (6) մշակութային չափումները, որտեղ ֆալիբիլիզմը ներկայանում է ոչ միայն որպես գիտելիքի հավանական սխալականության մասին իմացաբանական դիրքորոշում, այլև՝ որպես մարդու աշխարհայացքի բնութագիր և ինքնասխալականության գիտակցում, որին բնորոշ է ինտելեկտուալ խոնարհություն, քննադատական մտածողություն և բաց երկխոսություն: Այդպիսով, ֆալիբիլիզմը վեր է ածվում կյանքի կազմակերպման այնպիսի բարոյական-արժեքային կերպի, որը միավորում է մարդկային սխալականության, ճանաչողության սահմանափակության, պատասխանատու վարքի և բաց հաղորդակցության հարթությունները՝ ապահովելով քննադատության, բարեփոխման և առաջընթացի շարունակականությունը թե՛ անհատական, թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ հանրային մակարդակներում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**


1. **Աքելյան Դ.,** «Ֆալիբիլիզմի զարգացումը Կառլ Փոփերի իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում» // «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի», № 2 (73), Եր., 2025, էջ 258-271:
2. **Աքելյան Դ.,** «Ֆալիբիլիզմի զարգացումը 19-րդ դարի պրագմատիզմի փիլիսոփայությունում» // Գիտական Արցախ, № 1 (20), Եր., 2024, էջ 97-108:
3. **Աքելյան Դ.,** «Ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզի հայեցակարգային վեճի էությունը և իմացաբանական նշանակությունը» // ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Ա, № 1, Վանաձոր, 2024, էջ 249-261:
4. **Akelyan D.,** “The Development and Manifestations of Fallibilism in the Epistemology of Descartes and Hume” // Region and the World, № 1 (50), Yerevan, 2024, 87-94 pp.
5. **Akelyan D.,** “Epistemological and methodological aspectes and problems of conceptual debate of fallibilism and infallibilism” // Region and the World, № 6 (49), Yerevan, 2023, 74-82 pp.
6. **Աքելյան Դ.,** «Ֆալիբիլիզմը որպես հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթի առողջացման իմացաբանական-մեթոդաբանական հիմք» // Գիտական Արցախ, № 4 (19), Եր., 2023, էջ 86-99:
7. **Աքելյան Դ.,** «Ֆալիբիլիզմի ակունքները անտիկ փիլիսոփայությունում» // Գիտական Արցախ, № 3 (18), Եր., 2023, էջ 74-88:
8. **Աքելյան Դ.,** «Փիլիսոփայական իմաստավորման հիմնախնդիրն էքսպերիմենտալ գիտության համատեքստում» // ՇՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, № 2, Գյումրի, 2020, էջ 140-151:

**Акелян Давид Гагикович**

# ФАЛЛИБИЛИЗМ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ПРОБЛЕМ ФИЛОСОФИИ НАУКИ

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09.00.01 – “Философия”.

Защита состоится 13 мая 2026 г., в 16:30 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в Ереванском государственном университете по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а, ЕГУ

## РЕЗЮМЕ

Исторически в различных философских традициях утвердилось представление о том, что человеческое познание должно опираться на неоспоримые, непогрешимые и абсолютные эпистемические основания. Подобный познавательный идеал являлся устремлением многих философов, стремившихся обнаружить такие устойчивые опоры в познании, которые могли бы служить эпистемолого-гносеологическим фундаментом для достижения безошибочного, несомненного знания, а также достоверного и объективного познания.

Анализ классической эпистемолого-гносеологической проблематики и соответствующих концептуальных подходов показывает, что человеческое познание и знание не могут быть свободны от возможности ошибки и проявлений субъективного. Знание осмысливается как реальность изменчивого характера, которая в лучшем случае может быть обоснована и определена с точки зрения истинностной ценности лишь с определённой степенью приблизительной достоверности.

Классические эпистемологические концепции, выдвигающие максималистские притязания в отношении знания, в лице фундаментализма, догматизма и инфаллибилизма, утрачивают свою жизнеспособность, поскольку они не учитывают проблематичность выдвижения крайних и практически неосуществимых требований к знанию и его обоснованию, ошибочный и ограниченный характер человеческого познания, а также динамическую, развивающуюся и подлежащую пересмотру природу знания.

В условиях актуализируются вопросы о том, каким образом возможно обеспечение надёжного и обоснованного знания, которое при этом не исключало бы ошибочности, носило бы изменчивый характер и зависело от контекста и условий практического применения, а также о том, по каким критериям следует оценивать обоснованность знания. В данном контексте возможная ошибочность следует понимать как фундаментальное

ограничение познания и неотъемлемую характеристику знания, не смешивая её с ложью, заблуждением или фактической ошибкой. Ошибочность характеризует несовершенство человеческих познавательных способностей и неустранимость вероятностного риска ошибки в процессе познания, который, будучи встроенным условием познавательной деятельности, не может быть полностью преодолён, однако его признание делает возможным обеспечение непрерывно совершенствующегося и развивающегося характера знания.

Такие явления, разворачивающиеся в общественном, политическом и научном дискурсах, как необоснованные требования непогрешимости, избирательное принятие или отрицание фактов, а также тенденции к усилению крайних форм скептицизма и релятивизма, формируют ситуацию, в которой проблема ошибочности знания и её осмысление приобретают особую актуальность. В эпоху постправды требование обоснования знания нередко уступает место личным убеждениям, политическим интересам и информационным манипуляциям. В данном контексте фаллибилизм выступает в качестве реакции как на догматическую установку на непогрешимость, так и на деструктивный скептицизм, предлагая промежуточную, рациональную и здоровую критическую позицию, в рамках которой знание одновременно предстает как достоверное, но никогда не окончательное, как ошибочное, но поддающееся исправлению и совершенствованию.

**Akelyan Davit Gagik**

## FALLIBILISM IN THE CONTEXT OF CONTEMPORARY PROBLEMS OF PHILOSOPHY OF SCIENCE

Dissertation for the Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01 “Philosophy”.

The defense will take place on May 13, 2026, at 16:30 at Yerevan State University, at the committee meeting of Philosophy and Sociology with the specialty of HCC 013
Address: 52a Abovyan str., Yerevan, 0025, YSU

## ABSTRACT

Historically, within a wide range of philosophical traditions, it has been commonly maintained that human knowledge ought to rest upon indubitable, infallible, and absolute epistemic foundations. This type of epistemic ideal constituted the aspiration of many

philosophers, who sought to identify stable epistemic grounds capable of serving as an epistemological and gnoseological basis for attaining infallible, indubitable knowledge, as well as reliable and objective cognition.

An analysis of classical epistemological and philosophy-of-science problematics and their corresponding conceptual approaches demonstrates that human cognition and knowledge cannot be entirely free from the possibility of error and the presence of subjective elements. Knowledge is understood as a phenomenon of a dynamic and mutable nature, which, at best, can be justified and assessed in terms of its truth-value only with a certain degree of approximate certainty.

Classical epistemological conceptions that advance maximalist claims with respect to knowledge—such as foundationalism, dogmatism, and infallibilism—can no longer be regarded as viable, insofar as they fail to take into account the problematic character of imposing extreme and practically unattainable requirements on knowledge and justification, the fallible and limited nature of human cognition, as well as the dynamic, evolving, and revisable character of knowledge.

Under these conditions, questions concerning how reliable and well-justified knowledge can be secured while simultaneously acknowledging fallibility, contextual dependence, and practical applicability, as well as which criteria should be employed to assess the justification of knowledge, become particularly pressing. In this context, fallibilism (probabilistic) should be understood as a fundamental limitation of cognition and an intrinsic characteristic of knowledge, without conflating it with falsehood, error, or illusion. Probabilistic fallibilism characterizes the imperfection of human cognitive capacities and the ineliminable probabilistic risk of error inherent in the process of cognition. Although this risk, as a built-in condition of cognition, cannot be fully overcome, its recognition makes it possible to secure the continuously improvable and progressive character of knowledge.

Phenomena unfolding within public, political, and scientific discourses—such as unjustified demands for infallibility, selective acceptance or rejection of facts, and the growing tendencies toward extreme skepticism and relativism—create a situation in which the problem of fallibility and its examination become especially urgent. In the era of post-truth, the requirement of knowledge justification often yields to personal beliefs, political interests, and informational manipulations. In this context, fallibilism emerges as a response both to dogmatic infallibilism and to destructive skepticism, offering an intermediate, rational, and robustly critical standpoint in which knowledge is simultaneously understood as reliable yet never final, fallible yet corrigible.